

Թեան շնորհով, նրանից յետոյ դա՛նք պէտք է
բարձրանար նրա եղբայր Օտտոն, որովհետեւ
Լուդվիկ II անժառանգ մեռաւ, բայց սա էլ
հողեկան հիւանդ է և ապրում է Միւնխէնից 2
ժամ հեռավորութեամբ մի պալատում, իսկ Բա-
ւարիան կառավարում է Լուդվիկ I-ի որդի Լուիս
պոլը իբրեւ պրինց-րեզնետ Լուիսպոլդի անդրա-
նիկ որդին է պրինց Լուդվիկը, որը եօթը ազգիկ
և չորս տղայ ունի: Ինչպէ՛ս լրագրիւնները գրում
են, Օտտոնը անորոշելի հողեկան հիւանդ է, ու-
տելու մէջ սարսափելի որկրամոլ է, սիրում է
ազահոթեմամբ ծխել: Յաճախ գլուխը խփում է
պատերին, որից առաջացած վնասի առաջն առ-
նելու համար նրա սենեակները ամբողջապէս
ուեծիւնով ծածկված են:

Լուիսպոլդ պրինց-րեզնետը սաստիկ սիրված է
իր ժողովրդից: Երկու շաբաթ առաջ Միւնխէնի
հարաւարեմտեան կողմը գտնված ընդարձակ
թերեզանեղաշտի վրա ցուցահանդէս կար, որին
ներկայ էր Սպանիայի նախկին թագուհի Իզաբել-
լան, որին սպանիացիք իր անարժան և անբարո-
կան վարքի համար վաղեցիկ 1868 թւին Զը
նայելով նրա այս անարժան վարքին, Լուիս XIII
պապը նրան չքանչան է ընծայել, իբրեւ «օրինա-
կելի վարքով կնոջ»:

Յուզահանդիսի ժամանակ պրինց-րեզնետը իր
ձեռքով բաժանում էր գիւղացիներին մրցա-
նակները և ամեն մէկի հետ մտ երկու բո-
ւայ բարեկամաբար խօսում: Անկարելի է գրել
Միւնխէնից, և մոռանալ նրա գարեջուրը: Միւն-
խէնը իր գարեջրով երկրագնդիս առաջին մայ-
րաքաղաքն է: Բերլին, Լէյպցիգ և այլ քաղաքներ
ստանում են մեծ քանակութեամբ Միւնխէնից
գարեջուր: Բազմաթիւ գարեջրի գործարաններ
կան: Սրանցից նշանաւոր են մանաւանդ պալա-
տական գարեջրի գործարանը և Լեօպոլտովա
կոչված գործարանը: Սրանց գարեջուրը շատ
քաղցր է և ախորժելի:

Մի քանի խօսք էլ չըջակաների մասին: Միւն-
խէնից կէս ժամ հեռավորութեամբ գտնվում է
Նիմֆենբուրգ ամրոցը հրաշալի լճակով, շատ-
բուսանով, որը աւելի քան 35 արշին բարձրու-
թեամբ լուիւմ է և անտառով: Անտառում կան
ձեռնասողոր եղջերուներ, որոնք մօտենում են և
մարդու ձեռքից հաց ուտում: Երկու ժամ հեա-
ւորութեամբ գտնվում է Շլէյսհէյմ ամրոցը, նոյն
տարադով լճակով, շատբուսանով և անտառով:
Բայց Շլէյսհէյմի գաղթը կազմում է իւղանկար
պատկերների գալերէան, որը զարդարված է ի-
տալական, հին գերմանական և հոլանդական
չկուաների երկերով:

Միւնխէնի ցուցահանդիսի, պանօրամաների և
այլ կողմերի մասին շուտով երկրորդ նամակում
կը խօսենք:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լոնդոնից մի ցաւալի լուր են հաղորդում,—
այն է, որ իրանդական երեւի գործիչ Պարնէլ
հիւանդ է: Պարնէլի նման գործիչի հիւանդութիւ-

նը, այն էլ մի այնպիսի ժամանակ երբ պահպա-
նողական միւնիստրութեան դէմ կռիւ է սկսվում,
շատ զգալի կը լինի Իրլանդիայի համար:

—Սօֆիայից գրում են, որ այնտեղ յոյս ու-
նեն, որ Վիլհէլմ կայսրը վերադարձին կանցնի
Բուլղարիայով: Այժմեան կառավարութիւնը այդ
մասին շատ է աշխատում:

—Կրետի ազգաբնակչութեան մի պատգամա-
ւորութիւն պատրաստվում է մի ուղեւճ ներկա-
յանցնել Վիլհէլմ կայսրին, Կրետէի գործերի վե-
րաբերմամբ:

—Ֆրանսիացի մի զինուորական վերջապէս
գտել է (?) այն միջոցը, որով կարելի է հաշտեց-
նել Պերմանիան Ֆրանսիայի հետ, նա առաջար-
կում է վիթխարի մի դուէլ կազմել այդ երկու
պետութիւնների մէջ, ամեն մի կողմից դուրս
բերելով 100.000 ընտիր զինուորներ: Անկաս-
կած ընտիր պատերազմ կը լինի այդ հաշտեց-
նող դուէլը:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆՈՒՄՆԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 հոկտեմբերի: Նոր փոխառու-
թեան վերաբերեալ Բարձրագոյն ուկրա՛ւմ յիշ-
վում է, որ ազնուականութիւնը միշտ հո՛ւ է բե-
րել իր կեանքը և ունեցածը պետութեան և ժողո-
ւրդի բարօրութեան համար, որ յունիսի 12-ի օ-
րէնքով նրա վրա դրվում է նոր ծառայութիւն:
Կոչելով աւելի մօտուց և աւելի լայն կերպով ա-
ջակցելու կառավարութեանը տեղական վարչու-
թեան և ժողովրդի պէտքերը հողաւու գործում
Գրանից յետոյ ասված է, որ ուշադիր լինելով
ազնուականութեան տնտեսական պէտքերին, ար-
դարացի է համարված աւելի նպաստել դրան
հնչտացնելով երկար ժամանակեայ կրէդիտը՝ միա-
ժամանակ դուրս թողնելով ազնուական կալուա-
ծական բանկերի գրաւակա՛ններ՝ խաղարկութեան
տոմսերով: Ուկրա՛ւմ վերջում ասված է, «արտա-
յայտելով ձեռք առած բոլոր միջոցներով մեր
հողատարութիւնը Ռուսաստանի առաջնակարգ
դասակարգի մասին, Մենք հաստատ համոզված
ենք, որ ուստաց ազնուականութիւնը ինչպէս
միշտ, այժմ էլ կը լինի առաջին իրադրո՛ւղը
այն մտադրութիւններին, որ Մեզ ներշնչել է այն
մշտական հողատարութիւնը, որ ունենք նախախ-
նամութիւնից մեր հովանաւորութեան տակ դրած
ուսու ժողովրդի համար»:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 հոկտեմբերի: Լրագրիւնները
լաւ աչքով են նայում խաղարկութեան տոմսակ-
ները կրող նոր փոխառութեան վրա: Այսօրվայ
բօրտայում ազնական գրաւական թղթերը ծախ-
վում են 222-ից մինչև 223 բուրլի: Նախկին
խաղարկութեան փոխառութեան թղթերը 253 և
232 բուրլիով:

ԽճԱԳԻՐ-Հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐԹՈՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԳԻՄՆԱԶԻԱՅԻ ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍԱՏԱՆ

ՄԻ ԱՇԱԿԵՐՏՈՒՅԻ

ցանկանում է աշակերտութիւնը պատրաստել: Հասցէն. Նորայնի փողոց, տուն Պարոնէրէզովի
№ 8.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր

Ա Ռ Ա Ի Օ Տ Ն Ե Ր Ը

ԲՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆ-ԲԻՇԿ ԻՍՍԼԱԿԱՆՆ—11 1/2—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ԲԵՆԿԵՎՍԿԻ—11—12 ժ. ականջի, կոկորդի, քթի ց. և սիֆիլիսի (վիրաբուժ. և ատամնացաւի)
ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 ժ. երեքշաբթի, ուրբաթ և կիրակի, կանանց ց.
ԿԱՐԱՊԵՏԵՆՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի կիրակի:

ԵՐԵՎԱՆԵՐԸ

ԳԱՂՈՄՍԿԻ—5 1/2—7 ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի.
ՓՈՒԿԻՆՆԵՎ—5 1/2—6 1/2 ժ. ներքին, երեխայոց և ջղային ց. (էլեկտրօտեքապիա):
ԲԵՆԿԵՎՍԿԻ—7—8 ժամ.

Հիւանդանոցում են մանկաբարձուհիք՝ Երևանցի և Արտաղեսան:
Վճար—50 կ. Համալսարանի (կոնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ:
Հիւանդանոցի փոխ-վերահսկող ԲՈՒԴԿՈՎՍԿԻ

Ամսիս 22-ին, կիրակի օր, Մոզնու եկեղեցում պատարագից յետոյ կատարվե-
լու է ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱԳ-ՔԱՀԱՆԱՅ ՍՈՒՋԱՆԱՅՆԻ մահվան տարեդարձի հոգե-
հանգիստը: Հանգուցեալի յիշատակը յարգողները հրաւիրվում են ներկայ գտնվե-
լու նոյն եկեղեցում: Պատարագին կերգեն Գայեանեան օրիորդաց ուսումնարանի
աշակերտուհիները:

1—1

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳԱՅՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵՒԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ:

Չորեքշաբթի, հոկտեմբերի 25-ին, ԱՐՄԵՆԻԱ (ARMENIE) շոգենաւը, նաւա-
պետ ԳԱՐՐԻԳԻ (GARRIGUES) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Սամսոն,
Կ. Պօլս և Մարսէյ: Տեղեկութիւններ մասին պէտք է դիմել ընկերութեան
գործակալներին, Բաթումում Լէմօշլուի տան, Նաբերէժնայա, և Թիֆլիսում՝ Նախիլիս Ար-
ժրուհի գալլերէում, № 114.

(Շ.) 3—3

ԲԺԻՇԿ ՊՐԷՕԲՐԱԺԷՆՍԿԻ

Մասնաւորապէս բժշկում է եղկարականութեամբ, ֆարագէական և դալմանական հոսանքով
ձեռքերի և ոտների անդամաւորութիւնից, բնամատիցմից, ներվային հիւանդութիւններից և կօնտ-
րակտուրայից (մկանունների անդամաւորութիւն), բժշկում է կոլերերի և խուլերի անդամաւոր-
ութիւնից և նոյնպէս ընդունում է կանացի հիւանդութիւններով և սիֆիլիսով տկարներին:

Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան 9 ժամից մինչև 12 ժամ և երեկոյեան
7 ժամից մինչև 8 ժամ: Տուն Պապովի Միքայէլեան փողոցի անկիւն № 9 և Ելիսաւետինայա № 2,
կոնսիլիանտութեան մօտ, Վօրոնցովեան կառավարված սենեակների դիմաց:

Домъ Попова, уголъ Михайловской ул. № 9 и Елисаветинской № 2, около Итендантства,
противъ Воронцовск. номеровъ.

12—14

ՄԻ ԳԵՐԳԱՍՏԱՆ
ԸՆԴՈՒՆՈՒՄ Ե ԳԻՇԵՐՈԹԻԿՆԵՐ:

Դիմել հեռեւեալ հասցէով. Սոլջակ Գանսովի փողոց, տուն Շաղինեանցի № 25.
7—10

Միակ խաղական իրգայի կուցներեան խումբ ԲԱԼԶԱՄ որի յատկութիւնը յայտնի է աշխարհիս բոլոր երկրներում և չնոյրի է ճանաչված բժշկական Դիպրոտամիտից 4869 համարով:	 Մօսկվա 1882 Գոյութիւն ունի 1845 թից:	ՃՆՇՎԱԾ ԹԹԻՄՈՐ սիմիդրից պատրաստած: ՍՊԻՐՏ և մաքրած ԳԻՆԻ ՐՕՄ, ԿՕՆԵԱԿ, ԱՐԱԿ զանազան օղիներ և նաստիլաներ ՆԱԽԻԿԱՆԵՐ և ԻՍԷՆՈՒՄԵՐ Քրանսական օղի, կիւմիւլ արտասահմանեան լիկերներ և այլն:
--	---	---

Ա. ՎՕԼՖՇՄԻՏ, ՐԻԳԱ

Արժանացաւ բոլոր համայնարհային և այլ ցուցահանդէսներում ամենաբարձր պար-
գէներին:
Արդիւնները գտնվում են բոլոր գինեվաճառանոցներում:
Պրէյս-կուրանտները ուղարկվում են արլարձ:

2—10 (Հ.)

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES
PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳԱՅՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

(ՄԵՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵՒԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ
Ուրբաթ, 27 հոկտեմբերի 8 շոյեմբերի ԲԱԹՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգենաւ EBBE
(ԷԲԲ) նաւապետ RANGONE (ԲԱՆԳՕՆ), մանկով Կ. Պօլս, Պօրտ-Ղաճօս և Լակապալ:
Ազնուները՝ ԲԱԹՈՒՄԻՄ պ. Գ. ԷՍՍԷՆԺԵՐ, ԹԻՖԼԻՍԻՄ ԳԵՐՈԳ ՀԵՋՈՒԲԵԱՆ,
ՀԵՋՈՒԲԵԱՆՅ, իսկ ԲԱԳՈՒԻ մէջ ԳՕԼԿՈՒՍՏ:

2—2

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՄԱՐՍԱՂԱ ՔԱՀԱՔԻ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՈՒՄ
ԲԱՑՎԱԾ Ե ԳՐԱԴԱՐԱՆ:

Գրադարանը չունենալով սեփական միջոցներ, դիմում է յարգելի հեղինակներին,
Թարգմանիչներին և ուրիշ անձանց, խնդրելով օգնել գրադարանին՝ թէ գրքեր նուիրե-
լով և թէ զրամական նուէրներ անելով: Յանկացողները թէ գրքերը և թէ զրամական
նուէրները կարող են յանձնել Թիֆլիսում Կոնսրօնական գրավաճառանոցին, ուր և այդ
բոլորը կը մտցնվեն Թաւրիզի հայոց առաջնորդից տուած ժապաւնեալ մատնանի մէջ:
10—10

ՎՐԱՍԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԵԹԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՕՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ առեանի
մէջ նշանակված է աճուրդ, 27-ին սոյն հոկտեմբերի, առանց կրկնաձուրդի, կապալով
տալու համար Եջիմաճնապատկան այգին Օրթաճալայի:

Անդամ Կոնսիստօրիայի Ղևոնդ աւագ բաժնիայ Խարաղեանց

3—3

ԲՈՇԿԱՊԵՏ ԳԻՐԳՈՐ ՏԵՐ-ՄԿՐՏԵԱՆ ՏԵՐ-ԳԻՐԳՈՐԵԱՆՑ (ԹԻՖԼԻՍԵՅԻ)
Տեղափոխվեց նոր բնակարան (Սապէրնայա փողոց, տուն Ալլադանովի № 7):

10—10